

**«ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ
V ՓՈԻԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ**

1. Եթե կազմակերպությունը հարկային մարմիններին ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն 01.02.2016թ.-ին, սակայն մինչև այդ դուրս է գրել հարկային հաշիվներ 500 հազ. դրամի, ապա նշված գործարքների մասով որքան հարկային պարտավորություններ կարող են առաջանալ տվյալ կազմակերպության համար՝

ա) 100 հազ.

բ) 110 հազ.

գ) նշված գործարքների մասով որևէ հարկային պարտավորություն չի առաջանա, քանի որ շրջանառության հարկը համաձայն ՀՀ օրենսդրության, հանդիսանում է շահութահարկին ավելացված արժեքին փոխարինող վճար.

դ) 60 հազ.:

2. Եթե ՀՀ-ում գրանցված կազմակերպությունը եկամուտներ է վճարում ԼՂՀ-ում հաշվառված անշարժ գույքի վարձակալության համար ՀՀ ռեզիդենտ չհամարվող անձին, ապա ինչպես պետք է վարվի կազմակերպությունը ֆիզիկական անձին վճարված եկամուտների հարկման մասով՝

ա) հարկային գործակալը տվյալ դեպքում ֆիզիկական անձին վճարված եկամտից որպես հարկային գործակալ եկամուտների հաշվարկման և վճարման պարտավորություն չի կրում.

բ) հաշվարկվում է ինչպես ՀՀ ռեզիդենտին վճարվող պասիվ եկամուտների դեպքում կհաշվարկվեր.

գ) հաշվարկվում է ինչպես ՀՀ ռեզիդենտին վճարվող պասիվ եկամուտների դեպքում կհաշվարկվեր, եթե ֆիզիկական անձի և կազմակերպության միջև կնքվել է գրավոր և նոտարական վավերացմամբ պայմանագիր:

3. Նշվածներից ո՞րն է համարվում վերջնական հարկային պարտավորություն՝

ա) միայն հարկերի գումարները.

բ) հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված տույժերի և տուգանքների գումարները.

գ) միայն հարկային օրենսդրության դրույթները խախտելու համար հաշվարկված տույժերի և տուգանքների գումարները:

4. Ի՞նչ կարգով է ավել վճարված գումարները հաշվանցվում հարկային պարտավորություններից.

ա) սկզբում հարկերի, ապա տույժերի և տուգանքների գումարների հաշվին.

բ) սկզբում տուգանքների, ապա հարկերի, հետո տույժերի գումարների հաշվին.

գ) սկզբում տույժերի, տուգանքների, ապա հարկերի գումարների հաշվին:

5. Ինչպե՞ս են սահմանվում փոխառության ծախսումները՝

ա) տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք կազմակերպությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ.

բ) գուտ տոկոսների վճարման ծախսումներն են.

գ) փոխառության ծախսումները սահմանվում են որպես կազմակերպության չստացված եկամուտ:

6. Մասհանումների պլանին վճարվելիք մասհանումները կազմակերպության կողմից պետք է ձանաչվեն՝

ա) աշխատակիցների թոշակի անցնելու պահին.

բ) այն ժամանակաշրջանում, երբ թոշակը (հետաշխատանքային այլ հատուցումը) դառնում է վճարման ենթակա.

գ) աշխատակիցների կողմից համապատասխան ծառայությունը մատուցելու ժամանակաշրջանում.

դ) այն ժամանակաշրջանում, երբ թոշակը (հետաշխատանքային այլ հատուցումը) վճարվում է:

7. Հիմնական միջոցների մաշվածության օգտակար ծառայությունը՝

ա) հետագայում չպետք է վերանայվի.

բ) պետք է վերանայվի միայն օրենքով նախատեսված նվազագույն ժամկետների փոփոխության դեպքում.

գ) պետք է պարբերաբար վերանայվի և փոփոխվի, եթե ընթացիկ գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից.

դ) պետք է պարբերաբար վերանայվի և փոփոխվի, եթե ընթացիկ գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից՝ այն պայմանով, որ վերանայման արդյունքում օգտակար ծառայությունը չպետք է ավելացվի:

8. Ակտիվներին վերաբերող շնորհների ստացման համար նշվածներից ո՞րն է հանդիսանում հիմնական պայման՝

ա) գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ.

բ) գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ակտիվներ.

գ) գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի կարճաժամկետ ակտիվներ.

դ) վաճառի կամ այլ կերպ օտարի երկարաժամկետ ակտիվներ:

9. Կարճաժամկետ բանկային վարկերի գծով չկրած տոկոսային ծախսերի արտացոլում՝

ա) Դեբետ 516

Կրեդիտ 511.

բ) Դեբետ 516

Կրեդիտ 512.

գ) Դեբետ 516

Կրեդիտ 411:

10. Հոսքային գծի տեղակայման ծախսումների արտացոլում՝

ա) Դեբետ 821

Կրեդիտ 521.

բ) Դեբետ 822

Կրեդիտ 521.

գ) Դեբետ 118

Կրեդիտ 822:

**«ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ
ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ**

V ՓՈՒԼԻ ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1. $(15600+1300)*20\%=3380$ հազ. /ԱԱՀ դեբետ/

2.1. $3000*16.67\%= 500$ հազ. /ԱԱՀ դեբետ/

2.2. $2100*16,67\%=350$ հազ. /ԱԱՀ կրեդիտ/

3. $1600*20\%=320$ հազ. /ԱԱՀ կրեդիտ/

4. $900*3*16.67\% =450$ հազ. /ԱԱՀ կրեդիտ/

5. $(4200-4200*40%)*20\%=504$ հազ. /ԱԱՀ դեբետ/

6. $8800*16.67\%=1467$ հազ. /ԱԱՀ կրեդիտ/

Կազմակերպության կողմից առաջին և երկրորդ եռամսյակներում ձեռքբերված սարքավորումների մասով 4200 հազ. ԱԱՀ գումարը համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի հոդված 26-ի ենթակա է վերաձևակերպման և հաշվանցման:

$(4200*30\%)/2=630$ հազ. /ԱԱՀ դեբետ/

Հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար՝ 2427 հազ. ՀՀ դրամ: